

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

(իրավաբանական անձանց համար)

ք.Երևան

երկու հազար

թվականի

«Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերությունը (ք.Երևան, Չարենցի 1բ 42), այսուհետ՝ «Երաշխավոր», ի դեմս գործադիր տնօրեն Աննա Դարբինյանի, որը գործում է կանոնադրության և ՀՀ Օրենսդրության հիման վրա, մի կողմից և «
» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը (հասցե), այսուհետ՝ «Վարկառու»- «Կազմակերպություն», ի դեմս տնօրեն , որը գործում է կանոնադրության և ՀՀ Օրենսդրության հիման վրա, որի կողմից , կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Երաշխավորը պարտավորվում է կատարել Կազմակերպության պարտավորությունները պայմանագրում (այսուհետ՝ «Կապալի պայմանագիր») նշված դրամ գումարի շուրջ (տաս) % չափով, որը կազմում է () ՀՀ դրամ գումարի չափով՝ այն դեպքում, եթե Վարկառուն անվճարունակ լինի կամ այլ պատճառներով չկարողանա պատշաճ կատարել այդ պարտավորությունները:

1.2. Սույն պայմանագրով՝ Երաշխավորի կողմից պարտավորությունները կատարելու դեպքում վերջինիս հետադարձ (ռեգրեսային) պահանջների կատարումն ապահովվելու նպատակով Կազմակերպությունը պարտավորվում է Երաշխավորի մոտ գրավ դնել Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող () ՀՀ դրամ գումարի չափով:

Նշված գույքի գրավի պայմանագիրը կցվում է սույն պայմանագրին:

2. Կողմերի պարտականությունները

2.1. Երաշխավորը պարտավորվում է՝

2.1.1. սույն պայմանագիրն ստորագրելու պահից հինգ օրվա ընթացքում Կազմակերպությանը հանձնել գրավոր կատարման երաշխիք (այսուհետ՝ Երաշխավորություն) «
» պետական հիմնարկին այսուհետ՝ «Պատվիրատու», տրամադրելու պայմանով.

2.1.2. Պատվիրատուի կողմից Երաշխավորությունը կատարելու գրավոր պահանջը (այսուհետ՝ «Պահանջ») ստանալու դեպքում՝ վճարել մինչև () ՀՀ դրամ գումարի սահմաններում.

2.1.3. Պահանջը Պատվիրատուից ստանալուց հետո՝ այդ մասին գրավոր հայտնել Կազմակերպությանը.

2.1.4. Սույն պայմանագրով պարտավորությունները Երաշխավորն իր վրա է վերցնում () ամիս ժամկետով, մինչև թ:

2.2. Երաշխավորն իրավունք ունի՝ պահանջը Պատվիրատուից ստանալուց հետո անմիջապես բռնագանձում տարածել գրավ դրված գույքի վրա:

2.3. Կազմակերպությունը պարտավորվում է՝

2.3.1. պայմանագրի 2.1.2. կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում Երաշխավորին իրավունք ընձեռել բռնագանձում տարածելու գրավ դրված գույքի վրա.

2.3.2. Երաշխավորողին, որպես Երաշխավորության տրամադրման արժեք, վճարել Երաշխավորության գումարի % տարեկան: Վճարումները կատարելիս անվազ կամ անսական կտրվածքով:

3. Պայմանագրի փոփոխումը և դադարումը

3.1. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները համաձայնեցվում են կողմերի միջև ու ձևակերպվում պայմանագրին կից առանձին հավելվածներով:

3.2. Սույն պայմանագրով պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար կողմերը պատասխանատվություն են կրում գործող ՀՀ օրենսդրության համաձայն:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

4.2 Պայմանագրի գործողությունը դադարում է՝ _____ ք:

5. Այլ պայմաններ

5.1. Կողմերը սույն Պայմանագրով չնախատեսված մյուս բոլոր հարցերը կարգավորում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

5.2. Սույն պայմանագրին կից բոլոր հավելվածները և լրացումները պայմանագրի անբաժանելի մասն են:

5.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.4. Սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի իրավաբանական հասցեի, կարգավիճակի կամ պայմանագրին վերաբերվող այլ փոփոխությունների դեպքում անհապաղ տեղյակ է պահվում մյուս կողմին:

5.5. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի իրավաբանական հասցեները և ստորագրությունները

Երաշխավոր

«Գլաձոր ունիվերսալ վարկային
կազմակերպություն» ՓԲԸ
ք.Երևան-25, Չարենցի փ. 1բ 42
հեռ. 010 55-15-15
ՀՎՀՀ 01500346
Գործադիր տնօրեն՝

_____ Ա.Դարբինյան

Կազմակերպություն

« _____ » ՍՊԸ
ՀՀ,
ՀՎՀՀ
Հեռ.
Տնօրեն՝

_____ Լիազորված անձ՝